

սահմանը, միտքդ բեր, որ նա չէ կարող ոչինչ տրամադրել առանց Դանիայի համաձայնությանը: Այլ այն միջոցումը միտք արա, թե որքան ամոթ ես կարող ձգել քո վերա, եթե որ վստահաբար անկաջ կախես նորա սիրո թռչկոթյամբ լցված խոսքերին, և սիրտդ բոլորովին նրան տաս, և նորա համարձակ փորձերի առջև քո անմեղության դանձարանի դռները բանաս: Անձկալի՜ բարեկամ, քույրի՜կ Ուիելիա, աղաչում եմ քեզ, դգույշ կացիր, սրտիդ թափերը սանձիր և քեզ հեռու պահե նորա ցանկության նետերից ... Հավատա՛, որ անմեղ օրիորդի համար արդեն շատ-շատ է, եթե որ նորա գեղեցկությունը տեսնել լուսինը, ու առաքինությունը չկարծեմ թե կարողանա անձնատուր լինել բամբասանքեն: Շատ անգամ վտանգավոր որդը ուտում է բոլոր գարնանային ծաղկունքը, մինչդեռ նորա բնավ բացված ես չեն, և մանկությունը ավելի շուտ ընկնում է ցանցի մեջ այն ժամանակ, երբ որ նորա ծաղիկը դեռ նոր է շառագոռնում: Ուրեմն մեկ էլ եմ կրկնում, դգույշ եղիր...: Ամեն չար վտանգներու դեմ լավ պաշտպանություն է այն վտանգներեն վախենալը, և երբ մանկությունը շունի այդ անխաբ պաշտպանությունը, նա ինքն իրեն թշնամի է հանդիսանում:

ՎԱՀԱՆ ԹՈՒԹՈՎԵՆՅԻ ԵՐԿՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հուպարակում և առաջարկ ԼՅՈՒՍԻ ԱՐԵՂՅԱՆԻ

Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի օրերին, Ռ. Զարյանը, առաջինը լինելով, Շեքսպիրի հայ թարգմանիչների կողքին հիշատակեց և Վ. Թոթովենցի անունը: Շատերի համար դա նորություն էր, որովհետև մեր գրական հասարակայնությունը նրան ճանաչում է որպես գրողի, բայց ոչ թարգմանչի. նրա թարգմանությամբ որևէ գործ չի տպագրվել, բացի «Ռիշարդ Գ-ից» մի հատվածի, որ լույս է տեսել «Խորհրդային արվեստում» 1935 թվականին: Գուցե տարօրինակ թվա, որ նա հենց սկզբից թարգմանության համար ընտրել է ոչ այլ ինչ, քան Շեքսպիրի երկերը: Դա, իհարկե, ունի իր բացատրությունը: Նա իր ամբողջ գիտակցական կյանքում տարվել է Շեքսպիրով: Դեռ ուսանողական տարիներից, երբ սովորում էր Վիսկանսինի համալսարանում, ոգևորությամբ կարդացել, ուսումնասիրել է Շեքսպիրի ստեղծագործությունը: Նրա գրադարանում կարելի էր գտնել Շեքսպիրի երկերի ամենատարբեր հրատարակություններ, առանձին երկեր ու ծավալում հատորներ՝ և տա՛րածված, և ունիկալ գրքեր, տարբեր լեզուներով, տարբեր ձևավորումներով, վերջապես ինչ որ կարողացել էր ձեռք բերել: Հայաստան գալուց հետո էլ նա իր «շեքսպիրականը» կարողացավ լրացնել վերջին տարիների հրատարակություններով՝ բուկինիստներից և արտասահմանում ապրող իր գրական ընկերներից. այդպես նա ձեռք բերեց Հ. Մասեհյանի թարգմանությունները Վիեննայից, մի հատորում ամբողջական Շեքսպիր՝ մանրամասն

մեկնություններով, պատկերազարդ, Զորք Հարթապի Հրատարակությանը Այս գիրքը նա ստացավ Լոնդոնից, 1932-ին, և դա, կարծեմ, վերջինը կզավ:

Վահան Թոթովենցի գրադարանն իր կյանքի նման աստանդական է եղել և հայանվել տարրեր հանդամանքներով՝ շատ ճամփաներ է կտրել անցել, մերթ հարստանալով, մերթ կորուստանել տալով, նորից է հավարվել ու վերջապես անհետ կորել ու մնացել անհանգրք-վան:

Շատ վաղուց Թոթովենցը մտածում էր թարգմանել Շերապիրի մի շարք երկեր ու թեև հրաշալի տիրապետում էր բնագրի լեզվին, ոչ միայն ակնածություն, այլև երկյուղով էր մոտենում գործին: Վերջապես, 1934-ին նա ձեռնամուխ եղավ Շերապիրի երկու գործերի թարգմանությանը: «Ռիչարդ Գ-ի» և հետո «Անտոնիոս և Կլեոպատրան» բնաբանությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ դրանք հայերեն թարգմանված չէին, թեև նաև այն ժամանակի՝ երբ թարգմանիչն սկսում էր իր գործը: Հազիվ թե պատահական է, որ թարգմանվող առաջին երկը դարձավ «Ռիչարդ Գ-ը», իր խոսքով առած, «Շերապիրի պատմական ողբերգություններից ամենամոռայինը, զրեթե ամենահզորը և պալատական կյանքի պատկերելու տեսակետից, ամենացայտունը»:

«Ռիչարդ Գ-ը» և «Անտոնիոս և Կլեոպատրան» Թոթովենցը թարգմանեց երկու տարում, 1934-36 թթ.: Աշխատում էր զիշերները, երբ օրվա գործերն ավարտված էր լինում: Ասում եմ զիշերները, որովհետև մեր փոքր բնակարանի միակ սենյակը այլ հնարավորություն չէր տալիս, չէր կարող օրվա ուղած ժամին փակվել սենյակում և գործի անցնել: Պետք է տան հետ կապված բոլոր հուզերը, գնալ-գալը դադարել, երթևեկն բուն մտքեր, ճաշարարական ողբերգություններ, որ կարողանար աշխատել: Եվ այսպես, ոչ ավելի վաղ, քան երեկոյան ժամը 11-ից, դարձում էր սեզանին բազում գրեթե, շերապիրյան երկերի թարգմանություններ, ֆրանսերեն, ղերմաներեն բառարաններ, անգլերեն դանդաղ հրատարակություններ, և գործի էր անցնում: Այդքան պատրաստությունից հետո շատ անգամ թարգմանվում էր միայն մի քանի տող, որովհետև երբեմն տարվում էր նյութով ու մինչև ուշ զիշեր միայն կարգում էր: Սիրում էր հաջորդ առավոտյան կարգով ինձ թարգմանված մի քանի տողը և պատմել ամբողջ գլուխը կամ տեսարանը: Այդպես աշխատեց մինչև 1936 թ. ամառը: Ես տղայիս հետ մտածանք էի, երբ նրանից ստացա մի նամակ, ուր գրված էր, «Այսօր վերջացրի թարգմանությունս և զրեցի վերնագիրը, մի մեծ ծանրություն ընկավ ուսերիցս» (նամակը թվագրված է՝ 1936 թ., 16 հուլիսի): Դրանից երկու օր անց, հուլիսի 19-ին, Շերապիրի ողբերգված թարգմանիչը ձեռքակալվեց: Բոթն առնելով շտապեցի երևան: Տանը սեզանի վրա տեսա թարգմանված երկու գործերն էլ, հաստ կարմրավուն թղթի փաթեթների մեջ, կողքին դրված այն գրիչը, որով գրել էր վերջին նամակը և զրեց թարգմանության վերջակետը:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍԲ «ՌԻՉԱՐԴ ԵՐՐՈՐԻՒՄ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Մենք թարգմանել ենք «Ռիչարդ Գ-ը», նպատակ ունենալով ընթերցողներին նվիրել Շերապիրի պատմական ողբերգություններից ամենամոռայինը, զրեթե ամենահզորը և պալատական կյանքը պատկերելու տեսակետից ամենացայտունը:

Ռիչարդը— խեղ, թերածին, սապատող, տգեղ, չար, նենդ, ստախոս,

դավաճան, ոճրագործ, քաջ ռազմիկ, սրամիտ, խելոք, անխիղճ և ամբողջ աշխարհում միակ մի մարդ է, որ ձգտում է գահին և ձեռք է բերում այն, թեև կարճ ժամանակով:

Ռիչարդի շուրջը հավաքված է պետական շողոքորթների, պալատական լորդ մանկավիհների, ծայրահեղ չինովնիկների, երկչոտների և սեփական կաշուց վախեցող կոմսերի և դուքսերի մի հույլ: Այս բոլորը հյուսված է արքայական-ազնվական ընտանիքի ներքին ծայրահեղ բարդ, խորախոր հոգեբանական դրուժյունների մի ցանցով, որ լեցուն է տուժող, աղիոգործ լացուկոծ բարձրացնող կանանց անլուր անեծքներով և անակրնկալ տեսարաններով, տեսարաններ, որոնց հանդգնությունը միայն վայել է հանճարին: Շեքսպիրի ոչ մի ողբերգությունը չունի այնպիսի հանդուգն հոգեբանական տեսարաններ, որքան «Ռիչարդ Գ»-ը (Աննայի և Ռիչարդի սիրաբանությունը Աննայի, Ռիչարդի սադրանքներով սպանված սկեսրայրի դաժաղի առջև, առավել, Աննայի երիտասարդ ամուսնու սպանությունը նույն Ռիչարդի սադրանքներով, և երկրորդ թագուհի Նդիսաբեթի և Ռիչարդի տեսարանը, երբ Ռիչարդը համոզում է նրան իրեն կնություն տալ աղջիկը, որի եղբայրներին սպանել է Ռիչարդը: Թե Աննան դառնում է նրա կինը և թե Նդիսաբեթը համաձայնում է աղջկան տալ նրան):

«Ռիչարդ Գ-ի» առաջին հրատարակված բնագիրը համարվում է 1597 թ., այսպես կոչված, քառածալը հետևյալ վերնագրով. «Թագավոր Ռիչարդ Գ-ի ողբերգությունը, որ պարունակում է իր դավադրական սադրանքները ընդդեմ Կլարենս եղբոր, իր անմեղ եղբորորդիների ողորմելի ոճիրը, իր բռնակալական հափշտակությունը, իր զզվելի կյանքի բովանդակ ընթացքով և ամենաարժանի մահով»:

1598 թվին մի ուրիշ օրինակ ևս տպագրվում է միևնույն վերնագրով, միայն այն տարբերությամբ, որ այս անգամ ավելանում է հեղինակի անունը—Ուիլիամ Շեքսպիր:

Երրորդ հրատարակությունը կատարվում է 1602 թվին, որը հայտարարված է լինում «նոր հավելումներով»: 1605 թվին նորից է հրատարակվում և, հինգերորդ անգամ, 1613-ին, Շեքսպիրի մահից երեք տարի առաջ: Այս հինգերորդը համարվում է վերջին, այսպես կոչված, քառածալ հրատարակությունը, մինչև 1623 թվի ֆոլիոյի հրատարակությունը: 1623-ից հետո հրատարակվում է 1624-ին, 1629-ին և 1634-ին, որոնցից ոչ մեկը լրիվ չի կարելի համարել:

Շեքսպիրի ոչ մի ուրիշ դրամա չունի այնքան բնագրային տարբերություններ քառածալի և ֆոլիոյի միջև, որքան Ռիչարդը: Այնուամենայնիվ

նախընտրելին համարվում է քառածալը, բայց առանց երկդաի խառնուրդին չի կարելի ձևը բերել մի կատարյալ բնագիր, թեև, շատ վեճերի առիթ են ափել մի շարք ընթերցումներ և գեղես պիտի տան:

Մենք, հետևելով Հովարդ Ստաունդերնի խմբագրած բնագրին, այնուամենայնիվ աչքաթող չարինք ֆուլտոյի տարբերությունները, հայերեն մի քիչ ավելի կատարյալ օրինակ ունենալու մտահոգությամբ:

Կարծվում էր, որ Շեքսպիրը «Ռիչարդ Գ-ը» գրել է 1593 թվին, այժմյան տիրապետող կարծիքն այն է, որ նա գրել է այդ ողբերգությունը առաջին հրատարակությունից, 1597 թ., քիչ առաջ:

Մի քանի խոսք հայերեն թարգմանության մասին:

Մեր կարծիքով մինչև անգամ չարժե մտածել արձակ թարգմանության մասին: Շեքսպիրը պետք է թարգմանել չափածո, պայմանով որ չափածո թարգմանությունը, որքան կարելի է, լինի ամենամոտոբնագրին և, որքան կարելի է, հետևողական բնագրի տողերին և արտահայտչական ձևերին: Ինչպես հայտնի է, չափածո թարգմանության մեջ անկարելի է չավելացնել կամ չպակասեցնել մի ածական, երբեմն անհաղթելի դժվարություններ հաղթահարելու համար: Այս դեպքում մենք, գրեթե բացարձակապես, օգտագործել ենք այն ածականը, կամ այն կոչականը, կամ մակդիրը, որը ինքը Շեքսպիրը մի քանի տող վերև կամ մի քանի տող ներքև գործ է ածել միևնույն մտքի կամ անձի նկատմամբ, իսկ պակասեցնելու խնդրում ջանացել ենք այդպիսի բան երբեք չանել: Մեր ամենամեծ ջանքը եղել է պահել Շեքսպիրի պատկերը: Մեր կարծիքով, այս պետք է լինի մեր թարգմանության առավելությունը: Մենք չենք խուսափել մի քանի գրարար ձևերից ո՛չ միայն նրա համար, որ աշխարհաբար թարգմանելու պարագայում դժվարությունների ենք հանդիպել, այլ որ գրարար ձևերը անհրաժեշտ են Շեքսպիրի 300 տարվա հնությունը բույրը տալու համար: Մենք չենք խուսափել «զի, վասնզի, բանզի, ո՞ տա՞յր» և այլն ձևերից, անհրաժեշտ համարելով այդ ձևերը: Երբ բնագրում գրված է Ս. Գրքի պատմիրաններից մեկը, մեր կարծիքով չի կարելի թարգմանել «մի՛ սպանիր», այլ անհրաժեշտորեն պետք է թարգմանել «մի սպանաներ»: Մենք միշտ աշխատել ենք դրական բացասականի, կամ ընդհակառակը, շփերածել: Օրինակ՝ եթե Շեքսպիրն ասում է «մեռած է», չենք թարգմանել «կենդանի չէ»: Եթե Շեքսպիրն ասում է «Ես չեմ անի այդ և կմեռնեմ», չենք թարգմանել «Ես նախընտրում եմ մահը», ինչպես բազմաթիվ անգամներ արել է ֆրանսիացի թարգմանիչը՝ հակառակ այն իրո-

դուքյան, որ թարգմանել է արձակ, մի հանգամանք, որ թվում է, հնարավորություն պիտի ստեղծեր ավելի մոտ լինելու բնագրին:

Վերջին և կարևոր մեր մտահոգությունն է եղել թարգմանել այս դրաման բնմի համար, արտասանելու: Եթե չլիներ այդ մտահոգությունը, երբեմն շատ ավելի կարճ կարելի էր կառուցել տողը, բայց չէր արտասանվի: Շեքսպիրն ստեղծագործել է միայն բնմի համար և թարգմանչի մեծագույն մտահոգությունը պետք է լինի դարձնել թարգմանությունը բնական:

Թե ինչքան է հաջողել այս թարգմանությունը՝ մենք չենք կարող ասել: Հաղթահարել Շեքսպիրը—դա արդեն մի մեծ գործ է, որին քչերը կարող են արժանի լինել: Սերվանտեսն ասում է (Գոն Կիխոտ, 2-րդ հատոր), որ լավագույն թարգմանությունը գորգի հակառակ կողմն է, իսկ գորգի հակառակ կողմը տալիս է գորգի արվեստի դժգույն հեռապատկերը: Եթե մենք հասած լինենք այդ դժգույն հեռապատկերին, բավարարված կլինենք խորապես:

Երբեմն անհաղթելի են Շեքսպիրի բնագրի դժվարությունները: Եվ դժվարությունները ծագում են ոչ թե պատկերների ուրույնությունից և միակ Շեքսպիրի հանճարին հատուկ մտածողությունից և երևակայությունից և մտքերի խորությունից. դա իր կազմին. Շեքսպիրի բնագրի հասկացողության դժվարություններն ստեղծված են բնագրի աղավաղումներից: Այս է՝ ամբողջ գաղտնիքը: Երբեմն բնագրի մի բառի սրամիտ բնթերցմամբ՝ ամբողջ պարբերությունը լուսավորվում է: օրինակ՝ Գլոստերի հենց առաջին մենախոսության մեջ եթե Ջոնսոնի սրամիտ ուղղումը չլիներ days (օրեր) բառը dames-ի (տիկնիկներ), ոչ մի գլուխ չէր դիմանա՝ մտածելով, թե ի՞նչ է նշանակում «Եվ զվարճացնել չքնաղ, քաղցրախոս այս օրերին», այնինչ պետք է լինի «այս տիկնիկներին»:

Չմոռանա՞նք ասելու, որ ինքնուրույն ո՛չ մի աշխատանք չենք հավակնել կատարելու Շեքսպիրի բնագրի բնթերցման մեջ, հետևել ենք միշտ պատկառելի և համաշխարհային հռչակ վայելող շեքսպիրագետների կարծիքներին՝ առանց կասկածելու նրանց հմտության և նյութի տիրապետման, մեր ամբողջ մտահոգությունն է եղել լավ հասկանալ բնագիրը և, գլխավորը, լավագույն հայերենով վերարտադրել, և այդ լավագույնը, իհարկե, մեր փանաքի կարողությանց սահմաններում: Գյոթենն ասում է, որ մարդ չի կարող մի օտար լեզու սովորել ավելի, քան իր մայրենի լեզուն: Ապա կարելի է ավելացնել (թող ներմի մեր կարծիքը Գյոթեի կարծիքի բով դնելը միայն մեկ դեպքում), որ ինչքան էլ օտար լեզվի բնա-

զիրը մարդ լավ հասկանա, չի կարող թորգմանել, եթե խեղճ է մայրենի լեզվում:

Մեր կարծիքով, պիտի թարգմանել Եփեսոսից միայն այն դրամաները, որոնք չեն թարգմանվել Հովհաննես Մասեհյանի կողմից: Ռուսերեն Եփեսոսից մի քանի մարդիկ են թարգմանել և ահա ուսաներն ունեն Եփեսոսիցի լիակատար ժողովածուն: Մեր կարծիքով Մասեհյանը բավարար թարգմանություններ է արել (հայտնի են նրա միայն թարգմանությունները), սրանից հետո պիտի թարգմանել նրա չթարգմանածները՝ մի օր լիակատար հայերեն Եփեսոսից ունենալու համար:

«Ռիչարդ Գ-ից» հետո մենք արդեն ձեռնարկել ենք թարգմանելու «Անտոնիոս և Կլեոպատրա»:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎՆԵՅ

Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆՅԸ ԵՆՔՍՊԼԻՐԻ ՍՈՆԵՏՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Հրապարակում և առաջաբան ԲՅՈՒՐԱԿՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ

Հայտնի է, որ Վարդգես Սուրենյանցը զեղանկարչությունից բացի զբաղվել է նաև գրական աշխատանքով: Գրել է բանաստեղծություններ, մշակել է ժողովրդական հերիաթներ, ինչպես նաև թարգմանություններ է կատարել համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչների երկերից: Իմանալով մի շարք օտար լեզուներ, նա բնագրով կարդացել է Օմար Խայամի, Հաֆիզի, Գյոթեի, Հայնեի, Օսկար Ուայլդի, Եփեսոսիցի և այլ հեղինակների զործերը:

Իր սիրելի հեղինակների զործերից Սուրենյանցը կատարել է մի շարք թարգմանություններ: Մանսթանալով նկարչի արխիվին, տեսնում ենք, որ ամենից ավելի շատ թարգմանություններ նա կատարել է Եփեսոսիցի: Այս հանգամանքը, ինչպես և Սուրենյանցի կյանքից հայտնի որոշ դեպքեր վկայում են, որ Եփեսոսիցը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նկարչի կյանքում:

Անդրերեն նա սկսել է ուսումնասիրել դեռևս պատանի հասակից, նախքան Մյունխենի Գեղարվեստից ակադեմիա սովորելու մեկնելը: Անգլիական գրականության մեջ Սուրենյանցին ամենից ավելի հրապուրել է Եփեսոսիցը: Դեռևս 23 տարեկան հասակում (1883 թ.) նա ձեռնարկել է «Ռիչարդ III-ի» թարգմանությունը: Սուրենյանցը իր կյանքի ընթացքում թարգմանել է Եփեսոսիցի պիեսներից 6-ը («Ռիչարդ Գ», «Հուլիոս Կեսար», «Օթելլո», «Վինձորի ուրախ կանայք», «Միջամանային գիշերվա երազ», «Լիր արքա»¹), Գրանցից հրատարակված է միայն «Միջամանային գիշերվա երազը» («Հուշարար», 1912, գիրք Բ):

Ուշադրություն է դրավում այն հանգամանքը, որ Սուրենյանցին զբաղեցրել են նաև Եփեսոսիցի սոնետները, որոնց հանդեպ հայ հասարակաչնության մեջ չի եղել այնպիսի հետաքրքրություն, որպիսին եղել է մեծ դրամատուրգի պիեսների նկատմամբ:

¹ Պիեսների վերնագրերը բերում ենք ըստ Վ. Սուրենյանցի թարգմանությունների: